
ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՎԱՆԱՀԻՄՔԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԸ

ՆԱԲԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Տեղանունը պատմական, աշխարհագրական և լեզվական գործոնների յուրօրինակ հանրագումար է: Տարբեր ազգերի և դարաշրջանների տեղանունների պարզ համեմատությամբ երևան են գալիս դրանց ձևավորման ընդհանրությունները, իսկ գիտական քննության մակարդակում հստակ տարրորշվում են ընդհանրական տիպաբանական կադապարները, որոնք այս կամ այն չափով գործունակ են բոլոր ժամանակներում՝ անկախ տվյալ հանրության ազգային պատկանելությունից, լեզվի բնույթից: Յուրաքանչյուր լեզու իր զարգացման որոշակի շրջաններում ստեղծում է սահմանափակ թվով տեղանվանահիմքեր, այսինքն՝ բառաձևեր, որոնցից բառաբարդման և ածանցման եղանակով տեղանուններ են ստեղծվում: Տեղանվանաստեղծ բաղադրիչների որոշակի սակավության պատճառով է, որ անգամ ոչ մեծ տեղանքում կամ պետական տարածքում առկա են մի քանի նույնանուն աշխարհագրական միավորներ և բնակավայրեր: Ձորօրինակ՝ պատմական Փոքր Հայքում Աստղիկ տեղանունով վկայված են գետ, լեռնագագաթ, բերդաքաղաք և գյուղ:

Տեղանունները կողմնորոշիչ նշաններ են, որոնք պարունակում են որոշակի տեղեկություն անվանակոչված օբյեկտի մասին՝ շնորհիվ տեղանվանահիմք դարձած բառերի: Թեև ժամանակի գործոնի ազդեցությամբ տեղանվանահիմքերը ենթարկվում են հնչյունաբանական, ձևաբանական, իմաստաբանական փոփոխությունների, որոնց պատճառով տեղանունների տեղեկատվական բովանդակությունը սահմանափակվում է, երբեմն իսպառ ջնջվում՝ վերականգնվելով միայն տարժամանակյա ծագումնաբանական քննության մակարդակում:

Տեղանվանահիմքերի գիտական դասակարգումը կատարվում է տարբեր սկզբունքների հիման վրա՝ ձևաբանական, բառակազմական և իմաստաբանական¹: Ձևաբանական դասակարգման մակարդակում բացահայտվում են տեղանվանահիմքերի խոսքիմասային պատկանելությունը, թվի, հոլովի, խոնարհման և առկայացման կարգերի տարբեր դրսևորումները: Բառակազմական մակարդակում առանձնացվում են տեղանվանահիմքերի ածանցման և բառաբարդման ընդհանրական կադապարները: Յուրաքանչյուր ազգի պատմության տարբեր շրջաններում տեղանվանահիմքերն ի հայտ են բերում ձևաբանական, բառակազմական և իմաստաբանական յուրահատկություններ՝ կախված անվանադիր հանրության զարգացման մակարդակից, աշխարհայացքից, դավանանքից, այսինքն՝ հիմնականում արտալեզվական իրողություններից:

¹ А. С у п е р а н с к а я. Структура имени собственного. М., 1969, с. 41-43.

Հատկանվանագիտության մեջ ընդունված է տեղանվանահիմքերը նախ՝ բաժանել 2 խմբի՝ պարտադիր (իմպերատիվ) և ոչ պարտադիր (ֆակուլտատիվ), ապա վերջիններս դասակարգել վերոհիշյալ երեք սկզբունքներով: Առաջին խմբի տիպաբանական և իմաստաբանական կադասարները խիստ որոշակի են և սահմանափակ, երկրորդները՝ ձևի և բովանդակության տեսանկյունից բազմաբնույթ են²:

Պարտադիր տեղանվանահիմքերի իմաստաբանական դաշտն ընդգրկում է. ա) աշխարհագրական-ֆիզիկական տարբեր եզրույթներ՝ լեռ, սար, քար, ջուր, ծով, գետ, դաշտ, բլուր, լիճ, աղբյուր, աշխարհ, շեն, ավան, բերդ և այլն, բ) բուսական աշխարհի եզրեր, տեսակների անվանումներ՝ ծառ, ծաղիկ, տերև, միրգ, բանջար, վարդ, խնձոր, և այլն, գ) կենդանանուններ՝ արջ, աղվես, գայլ, հավք, արծիվ, աղավնի, օձ, թիթեռ, մրջյուն և այլն, դ) եղանակային և բնական երևույթների անուններ՝ ձյուն, քամի, մրրիկ, անձրև, կարկուտ, ցող և այլն, ե) մարդու և կենդանիների մարմնամասերի անուններ՝ ոտ, ձեռ, բերան, փոքր, լանջ, մատ, ող, ուս և այլն, զ) մետաղների և հանքատեսակների անուններ՝ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, գոհար, հակինթ, զմրուխտ և այլն, է) դիցանուններ և առասպելական ու պատմական հերոսների անուններ, նրանց ատրիբուտների բառային նշանակումներ՝ աստված, դի, սատանա, հրեշտակ, առաքյալ, մարգարե, խաչ, բագին, ը) մասնագիտություն, արհեստ նշանակող բառեր՝ սալվոր, դարբին, դեղագործ, գաջագործ, նկարիչ, գրիչ և այլն, թ) ազգակցություն ցույց տվող բառեր՝ մայր, հայր, սանամայր, աղջիկ, հարս և այլն:

Բացի տեղանքը և բնաշխարհն արտահայտող բառերից ու բառույթներից՝ պարտադիր տեղանվանահիմքեր են դառնում օբյեկտները բնութագրող որոշիչները, մակդիրները՝ վերին, ներքին, բարձր, ցածր, մեծ, փոքր, առաջին, երկրորդ և այլն: Այս տիպի տեղանվանահիմքերը համարվում են պարտադիր, որովհետև արտացոլում են օբյեկտիվ իրականությունը, իսկ տեղանունների առաջնային հատկանիշը, գործառույթը իրականության հաստատագրումն է: Այն, որ հաստատագրված իրականությունն արդեն կորուսյալ է, ավելի է բարձրացնում տեղանվան արժեքը, որովհետև տեղանունները թույլ են տալիս վերականգնել տվյալ տարածքի նախնական վիճակը: Այսպես՝ Սևանա կղզի տեղանունը վկայում է, որ Սևանի ջրի մակարդակը ժամանակին այնպիսին էր, որ ներկայիս թերակղզին բոլոր կողմերից պատված էր ջրով: Ոչ պարտադիր տեղանվանահիմքերն ուղղակիորեն կապված չեն նշանակվող օբյեկտների իրական հատկանիշների հետ, այլ գաղափարական-քարոզչական բնույթ ունեն: Դրանք ժողովուրդների պատմության հուշարձաններ են, դրանց դավանափոխության, արժեհամակարգերի կայացման և փլուզման վկայությունները:

Համեմատելով տարբեր հիմքերից կազմված տեղանունները՝ պետք է նշել, որ տեղանքի միավորների և հատկապես ջրային օբյեկտների անվանումները ամենահին շերտն են կազմում, վաղնջահայերենի ժամանակներից և սովորաբար կարճառոտ, անաձանց, հիմնականում արմատական բառանվանումներ

² Skú B. Н и к о н о в. Введение в топонимику. М., 1965, с. 23-26.

են: Ընդ որում՝ դրանց բառիմաստային դաշտում հնարավոր են տեղաշարժեր: Այսպես՝ ծով տեղանվանահիմքը կարող է տրվել և լճին, և լճակին, և անգամ աղբյուրին, լեռը՝ փոքրիկ բլրին, բլրաշարին: Տեղանունների հիմքում, բացի վերոհիշյալ որակական ածականներից՝ հաճախ դրվում են գունանուններ: Տեղանվանահիմք դառնում են գրեթե բոլոր հիմնական գույները՝ սպիտակ, սև, դեղին, կարմիր, կանաչ, կապույտ, գորշ և այլն: Տեղանվան կազմում սրանք ոչ միայն սոսկ գունանուններ են, այլև բառեր, որոնք օժտված են հավելյալ իմաստային երանգներով՝ զգայական-ոճական կամ փոխաբերական. այսպես՝ կարմիրը կամ գեղեցկության, կամ արյունահեղության, սևը. ողբի, դժբախտության, կանաչը՝ երիտասարդության և արգասաբերության ցուցիչներ են: Հին չինական տիեզերաբանների զատորոշիչ գույները ներթափանցել են Առաջավոր Ասիա, Մերձավոր Արևելք, Արևմուտք: Անգամ արդի թուրքերը արևելքը նշանակում են կապույտով (երկնագույն), հարավը՝ կարմիրով, արևմուտքը՝ սպիտակով, հյուսիսը՝ սևով: Արևելյան ժողովուրդների մեջ հարգի են դեղինը, դեղձանը՝ իբրև արքայականության խորհրդանիշ, արքայական ծիրանի: Աստիճանաբար գույները ստանում են որոշակի քաղաքական նշանակություն: Կապույտն արդեն ազատականության խորհրդանիշն է, իսկ կարմիրը՝ հեղափոխության, համայնավարության:

Թվական տեղանվանահիմքերից կիրառական են՝ մի, երկու, երեք, չորս, յոթն, տասն, տասներկու, քառասուն, հարյուր, հազար, բյուր ձևերը: Մեկից չորսը կապված են օբյեկտների իրական հաշվարկային, քանակային հատկանիշների հետ՝ Եռաբլուր, Քառագագաթ, Երկու ջուր, Միագլուխ և այլն: Հնայական, խորհրդանշական և կրոնական պատկերացումների կրողն են Յոթնակնուք, Քառասնից լեռ, Երից մանկանց, Տասներկու վկայից և համանման այլ տեղանունները:

Տեղանքի և տիեզերքի միավորներ նշանակող բառերը կամ աշխարհագրական եզրերը, սրանց հավելենք նաև բնակավայրերի տիպերն արտահայտող բառերը, հաճախ են հանդիպում տեղանուններում, և դրանք համարվում են հնագույն կադաստրներ: Ինչպես նշում է հայտնի տեղանվանագետ Էդ. Մուրզանը, «Չի կարելի մոռանալ, որ նախնադարում մարդը լեռն անվանել է լեռ, գետը կամ լիճը՝ ջուր և այդպես շարունակ: Այլ կերպ ասած՝ տեղանուններն ինչ-որ ժամանակ նույնանում էին տեղանքի աշխարհագրական միավորների բառային նշանակումների հետ»³: Այս պարագայում տեղանունների քննությունը կարևորվում է հատկապես տարժամանակյա կտրվածքով, որի հետևանքով հայերենով և հայտնի այլ հնդեվրոպական կամ սեմական լեզուներով չստուգաբանվող տեղանունները կարող են լինել հայերենի ձևավորման հիմքում ընկած արխաիկ լեզուների հետքեր՝ ուրարտական, հայասական, թրակափոյուզական, այսինքն՝ ներկայացնել հայերենի սուբստրատը:

Տեղանքի և բնակավայրերի անունները տեղանունների հիմք են դառնում մի քանի եղանակով. ա) բառը տեղանուն է դառնում ուղիղ ձևով. այս տիպի տեղանունները սահմանափակ թիվ են կազմում, և տեղանվանաստեղծման հիշյալ

³ Տե՛ս Է. Մ. у р з а е в. Очерки топонимики. М., 1971, с. 122.

եղանակը արդի ժամանակաշրջանում գործուն չէ: Այսպես՝ Բլուր, Ջրվեժ, Անձավ, Դաշտ, Արեգ, Ավան, Ավազան, Շեն, Գետափ, Լեռնանցք, Հանդ *և այլն*, ք) փոքր-ինչ ավելի տարածված են նման բառերից տեղանվանակերտ ածանցներով կազմված տեղանունները՝ Արևիկ, Աստղիկ, Աշխարհիկ, Ծովակ, Շենիկ, Հանք, Լեռնուտ, Լիճք, Գետիկ, Ջովք *և այլն*: Գրաբարյան ք հոգնակերտով տեղանունների ք բաղադրիչը վաղուց կորցրել է իր հոգնակիության իմաստը՝ բառահարաբերականից վերածվելով բառակազմական ձևույթի, գ) բարդ բառ տեղանուններ, որոնց բաղադրիչներից նվազագույնը մեկը տեղանքի միավոր նշանակող արմատ է, մյուսը՝ նրա որոշիչը կամ հատկացուցիչը՝ Աչաջուր, Քաղցրաջուր, Ջովասար, Սմբատաշեն *և այլն*: Բավական տարածված են նաև տեղանքի միավոր նշանակող 2 բառերից բաղադրված տեղանունները՝ Սևահող, Կաթնաղբյուր, Կալաքար, Աստղասար, Ծաղկատու, Դևաքար, Արեգաբլուր *և այլն*: Այս եղանակով ստեղծված տեղանուններն ամենահաճախադեպն են հայերենի զարգացման բոլոր շրջաններում, ներառյալ արդի փուլը, ընդ որում քար, սար, աղբյուր, ձոր, հովիտ տիպի հիմքերն այսօր կորցրել են իրենց իմաստային, բառային բովանդակությունը՝ վերածվելով տեղանվանակերտ ձևույթների. այսօր Վարդաձոր կարող է անվանակոչվել այն վայրը, ուր վարդեր ընդհանրապես չեն աճում, ձորեր նս չկան, դ) բառակապակցական տեղանուններ, որտեղ աշխարհագրական եզրույթներն ունեն տարբեր խոսքի մասերին պատկանող լրացումներ՝ Առաջին գյուղ, Երրորդ գյուղ, Չորրորդ գյուղ, Առաջին մաս, Երրորդ մաս, Առաքելոց ձոր, Կարմիր բլուր, Կապույտ լիճ, Քարի լիճ, Սատանի լեռ, Նշխարաց գետ, Այծից քար, Արջանոց լեռ, Արյան լեռ *և այլն*:

Տեղանքի միավորներ նշանակող բառերի կամ աշխարհագրական եզրույթների դերը տեղանվանաստեղծման մեջ միարժեք չէ: Դրանք գործուն են ջրանունների, լեռնանունների դեպքում *և նվազ հաճախադեպ՝ բնակավայրերի անվանումների ստեղծման ժամանակ*: Նկատելի է նաև հետաքրքիր մի օրինակափոխություն. բառակապակցական այս տեղանունների երկրորդ բաղադրիչը հաճախ սղվում է, այսպես՝ Չոբանի լեռը դառնում է Չոբան, Վահագնի ջուրը՝ Վահագնի *և այլն*: Տեղանունների հնագույն շերտն արտացոլում է այն ժամանակները, երբ մարդն աշխարհն ընկալում էր գուտ մարդակերպ՝ ըստ պատկերի յուրում: Դաշտերն ու լեռները, գետերն ու լճերը, բերդերն ու շեները նմանեցվում էին աչքերի *և շուրթերի, ձեռքերի ու ոտքերի, թևի ու թիկունքի, այստեղից էլ մարդու *և* կենդանիների մարմնամասեր նշանակող բառերի առատությունը տեղանուններում, մի գործընթաց, որն աստիճանաբար մարում է, որովհետև առարկայական գուգորդումը մտածողության նախնական մակարդակի արտացոլումն է*: Տեղանունների հիմքում ընկած մարմնամաս արտահայտող բառերն էլ աստիճանաբար կորցնում են իրենց առաջնային, բուն իմաստը՝ դառնալով աշխարհագրական եզրեր՝ Սարալանջ, Արևկող, Բյուրակն, Ակնալիճ, Արագածոտն *և այլն*: Այս *և* նման տեղանուններում լանջ, կող, ոտն, ակն, փոր բառերն այլևս մարմնամասեր չեն նշանակում: Ըստ կազմության՝ մարմնամասից կազմված տեղանունները հիմնականում երկրադարձիչ են. բաղադրիչներից առաջինը կամ ածական որոշիչ է, կամ, ավելի հաճախ, հասարակ գոյական է՝ դրված սեռական հոլովով՝ հատկացուցիչ է, իսկ լրացյալը մարմնամաս նշանա-

կող բառն է՝ Մասյաց թիկունք, Մասյաց ոտն, Բերդաց փոք, Ագորդաց փոք, Ծակ փոք, Խոփ գլուխ, Դև սիրրտ, Բագեի քիթ, Երկու երես, Տավրո բերան, Գայլու բերան *և այլն*: Մակայն այս վերլուծական կազմությունները միտում ունեն վերածվելու միաբաղադրիչ բառային բարդությունների՝ Բերդաց փոք - Բերդափոք, Արագածու ոտն - Արագածոտն *և այլն*: Մարմնամաս նշանակող բառերն ինքնին առանց լրացման կամ լրացյալի համեմատաբար սակավ են դառնում տեղանուն՝ Կտուց, Գավակ, Բերան, Ճակատք, Թաթ, Ճանկք, Պոզ, Ազի, Ծծեր, Երախ *և այլն*: Ըստ տիպաբանական դասակարգման՝ այս տեղանունները որականիշ-նկարագրական են, անվանում են առարկան մարդու կամ կենդանու մարմնամասերի հետ ունեցած ուղղակի, ավելի հազվադեպ այլաբանական նմանության հիման վրա՝ Աքաղաղի կատար, Առ Նոյ ոտն, Մազի կամուրջ, Բագեի քիթ, Քերծի ուս, Իծի պտուկ, Պոռոշի սար *և այլն*: Կենդանանուններից ածանցված տեղանուններն իմաստաբանորեն դասակարգելով՝ կարող ենք առանձնացնել. ա) վայրի կենդանիների անուններից առաջացած տեղանունները, որոնց վերլուծությունը հնարավոր կդարձնի վերականգնել պատմական Հայաստանի կորսվող կենդանաշխարհի պատկերը, բ) ընտանի կենդանիների անուններից առաջացած տեղանուններ. վերջիններիս միջոցով ճշտվում են պատմական Հայաստանի տարածքում անասնապահության զարգացման մակարդակն ու աստիճանը, գ) թռչնանունների *և* դ) սողունների դասի անուններից կազմված տեղանուններ: Հայաստանում իրենց քանակով *և* տարածման հաճախականությամբ աչքի են ընկնում արջ բառից կազմված տեղանունները. Արջք, Արջավազ, Արջաքարեր, Արջանոց լեռ, Արջի սար, Արջի ձագ, Արջադուռ, Արջահովիտ, Արջուց վանք, Արջազուր *և այլն*: Այս կենդանու անունից գերակշիռ մեծամասնությամբ ստեղծվել են տեղանքի միավորների անուններ՝ լեռներ, գագաթներ, կիրճեր ու գոգավորություններ, շատ ավելի սակավ՝ գավառ *և* գյուղեր կամ շեներ: Արջին զուգահեռ՝ մեր տարածքում գերիշխող է գայլ գիշատիչը, որի անունից բաղադրված տեղանուններ *և*ս հայերենի հին շրջանում տարածված էին՝ Գայլ՝ գետեր, լեռներ, Գայլի, Գայլի դրունք, Գայլի դուռ, Գայլու անապատ, Գայլու, Գայլու ձոր, Գայլ Հին, Գայլ Մյուս, Գայլգունք, Գայլաքար, Գայլագետ, Գայլատուք, Գայլատուն *և այլն*: Նշված կենդանանուններին հաջորդում են վարազը, ապա՝ աղվեսը *և* առյուծը՝ որպես տարածված տեղանվանահիմքեր՝ Վարազահան, Վարազաբույն, Վարազակերտ, Վարազավանք, Աղվես, Աղվեսի, Աղվեսահոգի, Աղվեսաշինու ամրոց, Աղվեսի բներ, Առյուծ, Առյուծ թիլ, Առյուծ կա, Առյուծասար, Առյուծի ձոր *և այլն*:

Ընտանի կենդանանուններից մեր տարածքում գործուն տեղանվանահիմքերն են՝ գառն, եզն, խոզ *և* շուն ձևերը: Այսպես, Գառներ, Գառնակերտ, Գառմորփի, Գառնուկ, Եզ, Եզնաքար, Եզան անցք, Եզնասար, Խոզաբեր, Խոզաղբյուր, Խոզիկ, Ծներ, Ծնաղբյուր, Ծնամորթ *և այլն*: Սողուններից բաղադրված տեղանուններում միանշանակ հաղթողը օձն է՝ Օձաքար, Օձասար, Օձաբերդ, Օձեր *և այլն*:

Նշենք, որ Գառնի հայտնի տեղանունը ծագում է ոչ թե կենդանանունից, այլ ենթաշերտային ձև է, որ գալիս է դեռևս ուրարտական ժամանակներից, *և* Ն. Հարությունյանն այն ստուգաբանում է հետևյալ կերպ՝ «Գիառնիանի, այս երկի-

րը հիշատակվում է Արգիշտի Առաջինի արձանագրության մեջ և լիովին համընկնում է անտիկ Գառնեա և ժամանակակից Գառնի ձևերի հետ, բնիկների արտասանությամբ՝ Գյառնի: Իսկ վերջավորությունն ակնհայտորեն տեղանվանակերտ ածանց է, լայն տարածված ուրարտական շրջանի Հայաստանում՝ Ախուրիանի, Նիխիրխանի...⁴:

Բուսանուններից կազմված տեղանունները, ի տարբերություն կենդանանուններից բաղադրված կառույցների, կենսունակ տեղանվանահիմքեր են և ներկայումս էլ ծառայում են որպես նոր բնակավայրերի անվանակոչման կամ հների վերանվանման աղբյուր: Ուստի և նոր շրջանի ծնունդ նման տեղանուններում բուսանուններն ունեն հիմնականում պայմանական դեր և այնքան էլ կապված չեն անվանակոչվող միավորների բուսական նկարագրի հետ: Այսպես՝ Նոնասար գյուղում կարող են բնավ նշենիներ չաճել, Տանձուտում՝ տանձենիներ: Կաղապարների առումով բուսանուններից կազմված տեղանուններն ոչնչով չեն տարբերվում կենդանանուններից կամ տեղանքի միավորներից կազմվող տեղանուններից: Այսպես՝ ա) անձևույթ՝ Շամբ, Շրեշտ, Թնի, Մայրի, Փշատ և այլն, բ) ածանցային՝ Տանձուտ, Սոճուտ, Սալորկուտ, Խնձորկուտ., Շամբք, Նոնենիք և այլն, գ) բարդ, որտեղ վճռորոշ են հովիտ, ձոր, սար, շեն և համանման տեղանվանակերտ հիմքերը՝ Ուրցաձոր, Վարդաշեն, Փշասար, Ծաղկահովիտ և այլն, և դ) բառակապակցային՝ Խաշխաշի լեռ, Կաղնուձոր, Շրեշտի սար և այլն: Վերջիններս հիմնականում հատկացուցիչ-հատկացյալ կառույցներ են:

Անձնանուններից կազմված տեղանուններն իրենց տարածվածությամբ չեն զիջում տեղանքի միավորներ և բնակավայրերի տեսակներ նշանակող բառերից կազմված տեղանուններին, սակայն վերջիններիս համեմատ առավել երիտասարդ են, քանի որ նախնադարում մարդու մտածողությունը ծանրաբեռնված չէր կրոնական, գաղափարական հոսանքներով, հերոսների և առաջամարտիկների անուններով: Տեղանվանագետ Վլ. Նիկոնովն այս կապակցությամբ նշում է. «Տոհմացեղային հասարակարգի մայրամուտին ծագեցին անձնանուններից ծագող տեղանունները: Դրանք ազդարարում էին արդեն արմատավորված խոր անհավասարությունը տոհմային հասարակության մեջ, որից առանձնանում էր իշխող վերնախավը՝ ազնվականությունն իր աստիճանակարգությամբ: Սկզբում անձնանուններից կազմվում էին միայն տվյալ տոհմին վերաբերող օբյեկտների անվանումները, այսպես կոչված հայրանվանական տեղանունները: Տոհմային կարգի քայքայման ժամանակ այս տեղանունները կորցրին իրենց նախնական նշանակությունը՝ դառնալով պայմանական միավորներ»⁵:

Նման տեղանունների իմաստաբանական դաշտում ինքնուրույն դիրք են գրավում ա) տոհմանուններից առաջացած ձևերը, որոնք հնագույն ծագում ունեն և այսօր ջնջվել են՝ Բզնունիք, Արշարունիք, Պալունիք, Սյունիք և այլն, բ) դիցանուններից, ինչպես նաև քրիստոնեական սրբերի ու հերոսների անուններից կազմված տեղանունները. Վահագնունիք, Վահագնի Վերին, Վահագնի

⁴ Տե՛ս Н. А. Р у т ю н я н. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 62-63.

⁵ В. Н и к о н о в. Նշվ. աշխ., էջ 30:

Ստորին, Վահագն, Վահագնասար, Նանե, Անահտական, Աստղկա բերդ, Աստղկան, Հովհանավանք, Մեսրոպավան, Սահակ, Գրիգորիս, Թադե *և այլն*, գ) պատմական հայտնի դեմքերի *և* առասպելական հերոսների անուններից կազմված տեղանուններ. Արայի լեռ, Շամիրամ, Շամիրամագետ, Շամիրամակերտ, Հայկաձոր, Հայկ, Հայկավան, Բել, Դավիթ, Դավթի քար, Մհերի դարպասներ, Սանասար *և* Բաղդասար, Ծովինար, Հռիփսիմե, Հռիփսիմյանց քարայր, Մարիամո, Մարիամաշեն, Նունեա, Նունի, Նունից, Շուշանա գյուղ, Շուշանիկ, Շուշանից լեռ *և* այլն:

Անձնանուններից տեղանուններ ստեղծելու այս եղանակն արդի հայերենում գործուն է: Պատմական հայտնի դեմքերի, այդ թվում առասպելական հերոսների անուններից ծագած տեղանունները մեծաթիվ են: Ճիշտ է, հերոսների անունները դարաշրջանից դարաշրջան կարող են փոխվել, բայց տեղանուններ կերտելու նշված եղանակը մշտակա է: Այսպես՝ խորհրդային գաղափարախոսության անկումից հետո Հայաստանի անկախ Հանրապետությունում սկիզբ առած տեղանվանափոխման գործընթացը դրա վառ ապացույցն է, Երևանում բոլշևիկյան գործիչների անվան փողոցներն իրենց տեղը զիջեցին հայոց պատմության հերոսների անուններից կազմված ձևերին:

*Տեղանվանահիմքերի մեծ խումբ են կազմում կրոնական բովանդակություն ունեցող բառերն ու բառաձևերը: Այս տեղանվանահիմքերի իմաստային դասակարգումը բազմաստիճան է՝ հեթանոսական, քրիստոնեական, մահմեդական կրոններին առնչվող: Ըստ այդմ՝ բոլոր խմբերում առանձնանում են. 1) կրոնական լեզենդներից, ավանդություններից առաջացած տեղանվանահիմքեր *և* դրանցից բաղադրված տեղանուններ՝ Նոյի գերեզմանակ, Նոյան տապանի լեռ, Գյուղ ութից, Ագոավի տապան, Ծննդոց անտառ *և* այլն, 2) ծիսական *և* դավանաբանական եզրույթներից առաջացած կառույցներ՝ Խաչ, Մատաղաբլուր, Բագին, Նշխարք, Ինն մասունք, Մարկավագաց *և* այլն, 3) դիցանունների *և* նրանց հակադիր բևեռների՝ մույթ ուժերի անուններից առաջացած ձևեր՝ Հուդայի դուռ, Անահտական, Սատանայի կամուրջ, Սատանայի գերեզման, Նեմրույթ *և* այլն, 4) կրոնական զգացումներ արտահայտող տեղանվանահիմքեր, որոնք կամ առանձին, կամ այլ բաղադրիչների հետ կազմում են տեղանուններ՝ Զորավիզ, Կամակատար, Երաշխավոր, Փառավոր լեռ, Բարձրյալ *և* այլն, 5) կրոնական շինություններ, հաստատություններ նշանակող տեղանվանահիմքեր՝ Վանք գյուղ, Վանք գետ, Անապատ, Մատուռ գյուղ, Մատուռ, Եկեղեցի *և* այլն:*

*Այս խմբերից յուրաքանչյուրը բնութագրվում է ընդգրկման առանձին ոլորտով, հաճախականությամբ, կառուցվածքային մանրակաղապարներով: Եթե ընդհանրացնենք կրոնական բովանդակության տեղանվանահիմքերի ծագման յուրահատկությունները, ապա պետք է նշել, որ դրանց հիմքում ընկած են անվանակոչման 3 սկզբունքներ. ա) ըստ անձնանունների, այդ թվում *և* դիցանունների, բ) ըստ անվանակոչվող օբյեկտների առաջնային հատկանիշների, որոնք կարող են լինել *և*՝ իրական, նյութական, *և* զգացմունքային, այլաբանական, գ) ըստ դիրքի *և*՝ տեղակայման. անցյալում ընդունված էր նորաստեղծ բնակավայրերը, աշխարհագրական միավորները կոչել շրջապատում արդեն գտնվող սրբավայրերի անուններով, օրինակ՝ Ամենափրկիչ եկեղեցու մերձակայքում*

գտնվող գյուղերը, լեռնագագաթները, ձորերը և այլն, ևս կոչվում էին Ամենափրկիչ կամ այս անվանումից բխեցված այլ ձևերով՝ Ամենափրկչաց լեռ, Փրկչի գյուղ, Ամենափրկչի ձոր, գետ և այլն:

Ըստ տեղանվանագետ Յու. Կարպենկոյի՝ «Միայն իմաստաբանական ոլորտից դեպի իրական աշխարհ անցման դեպքում է վերանում տեղանունների ծագման շուրջ առկա մշուշը: Աշխարհագրական անվանումների ստուգաբանության այս փուլում ենք հնարավորություն ստանում պատասխանել կարևորագույն այն հարցերին, թե ինչ պատճառներ, պատճառահետևանքային կապեր ունեն տեղանունները»⁶: Վերը քննարկված հայկական տեղանուններն իրենց հիմքակազմից բաղադրիչներով լիովին հաստատում են ասվածը:

СЕМАНТИЧЕСКОЕ ПОЛЕ АРМЯНСКИХ ТОПООСНОВ

НАРИНЕ ДИЛБАРЯН

Р е з ю м е

Основой для образования топонимов служат определенные лексикограмматические единицы данного языка, которые становятся топоосновами. Топоосновы классифицируются по нескольким признакам: морфологическим, лексическим и семантическим. Семантическая классификация выявляет следующие группы продуктивных топооснов: 1) местные географические термины, 2) зоонимы, 3) фитонимы, 4) слова, обозначающие части тела, 5) этнонимы - антропонимы, 6) религиозные термины и т.д. Анализируя семантическое поле армянских топооснов в диахроническом срезе, исследуя их структуру, этимологию, распространенность и продуктивность, выявляются общие закономерности возникновения топонимов, тенденции изменений.

THE SEMANTIC FIELD OF ARMENIAN TOPONYMIC STEMS

NARINE DILBARYAN

S u m m a r y

Lexical and grammatical units serve as a basis for the toponyms of the language, which turn into toponymic stems. The toponymic stems are classified by different characteristics: morphological, lexicological and semantic. The semantic classification reveals the following groups of productive toponymic stems: 1) local geographical terms, 2) zoonyms, 3) phitonyms, 4) names of the parts of the body, 5) anthroponyms, 6) religious terms, etc. The semantic field of the toponymic stems are analysed from the diachronic point of view. The analysis of the structure, etymology, usage and productivity of the Armenian toponymic stems discovers universal regularities of the formation of toponyms, basic tendencies of changes.

⁶ Ю. К а р п е н к о. Взаимосвязь географических терминов и топонимов.– “Вопросы географии”, вып. 81, М., 1970, с. 45.